# ՑՈՒՑԱԿ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

## ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ

## (1512 — 1800)

---

### 67

ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ. ՏՕՄԱՐ: *Ամստերտամ, տպ. Թովմաս եպս. Վանանդեցի*, 1698. 2 չհ. + 106 = 108 էջ:

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԵՏԵՍԱԿ ԱՄՍՈՑ Հռոմայեցւոց, Ազարիայի, Հայոց, Հրէից, եւ Տաճկաց: Եւս Շրջան մշտնջենաւոր՝ Տարեկան զեկուցմանց. այլեւ Հին, եւ Նոր Տօմարի Զատկացն Սահմանաց: Ի զբօսանս մերազնեայ Տօմարասէր Եղբարց: Շարեցեալ ի Յօհաննիսեան Մատթէոսէ. եւ յօրինեցեալ յապիրատ Նուրիջանեան Ղուկասէ՝ Վանանդեցւոյ: Տպիւք՝ եւ ծախիւք Թօմայ Եռամեծ Վարդապետին, եւ Վանիցն Գողթնեաց Սրբոյ Նշանին՝ Սրբափայլ Եպիսկոպոսին: Յամի Տեառն 1698: ՅԱմստէրդամ*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Յօդեաց զասուն երանուէտ.*
*Հաղորդ զտայց՝ եւ են յաւէտ:*
*Բովէսպար ի այտո լերայ.*
*զի յառաքեա՛լս միշտ յօրացայ:*
*Բամեա՛լ ազինք բանաւորաց.*
*առ քեզ զօշեն Տէրըդ կենաց:*
*Դարման հոգւոյ խոկ եւ մարմնոյ.*
*ԽԾ մատուցես բժիշկ հանրոյ:*
*Ի ձայն Հաւուդ Զօրաւորի.*
*յարեայց ի յօրըն աներեկի:*

*Վերըդրեցեալ չափաբանական խնդրուածն է՝ առաջեալ յԵռամեծ Թօմայ վանանդեան Բաբուենւոյն, որում եկթարկին Տպարանս, ամենայն աշխատանք, եւ աշխատաւորք Տպարանիս. ի փառս, եւ ի Պատիւ հանուրց էին. Ամէն:*

*Կիւլպէնկեան Մատենադարան*

264·11

Նու. 1698

### 68

ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ. ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ: *Լիվոռնօ, հրտ. Սարգիս եպս. Եւդոկիացի*, 1698. 344 էջ:

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ. արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիայ Վարդապետէ։ Եւ ևս Սարգիս Եպիսկոպոսս աշխատասիրեալ. և դրասս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ. Որ և ընթերցողացն Աստուածաշունչ գրոց բաւականէ լինել. տպագրեցաւ։

Ի Հայրապետութեան Տեառն Նահապետի Կաթուղիկոսի ամենից հայոց։ Ի Ցայիկոն-նայ. Քաղաքի. և Թվականութեանս հայոց. ռճխէ. յունիս. ժ. և ի Թվին փրկչին. 1698. յունիսի ժ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Շնորհիւն և ողորմութեամբն աստուծոյ. Աւարտեցաւ Բառգիրքս. Թվին հայոց. ռճխէ. և Հոկտեմբերի ամսոյ. ի։ Ի լաւ և ընտիր օրինակէ. որ և յոյժ օգտակար է ընթերցողացն Աստուածաշունչ և այլ գրեանս. Աշխատասիրութեամբ. Սարգսի Բանասիրի Եւդոկիացւոյ. որ և առհէթնի վերաձայնեալ. և որդեակն իմ Սիմոնն. որ յոյժ աշխատեցաւ ընդ իս. ի Թափել գծլխագիրսն. և ի սրբագրելն. զի ի տպարանին ոչ գոյր. բազում գլխագիր. վասն այն առաջին տառն ի վերայ այբից խաղ եդաք զի ի տեղի գլխագրի լիցի. և զայն խաղով այբերն գլխագիր իմասջիք. և զվերոյգրեալ Սարգիս Եպիսկոպոս և զորդեակն իմ զսիմոնն յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեզ. և զծնողսն մեր. և դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ աստուծոյ մերմէ Ամէն։

Կիւլպէնկեան Մատենադարան

463

Եմ 1698

69

ՇԱՐԱԿՆՈՑ։ Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1699. 527 + 1 չհ. = 528 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀՕՔ ԱՄԵՆԱԶՕՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ։ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ մերոյ Յիսուսի Քրիստոսի և յօժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ պարգևատուի. Ըսկիզբն եդաք երաժշտական երգս Շարականաց. գեղեցիկ յօրինեալ ի սրբոց մերոց վարդապետաց. ի լուսաւորութիւն և ի պայծառութիւն եկեղեցեաց հայաստանեաց։ Ըստ աւուրց պատշաճին ըղձէրանեացն և ըղորրոցն զօրհնութիւնսն քաղուածովք եդաք զի մի որ աշխատեսցի որոնել. նոյնպէս զգիշերապաշտօնսն Զատկունեացն և զմարտիրոսացն և զաւուր պատշաճն իւր տարօքն եդաք կարգաւ։ Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Նահապետի Սրբազան Կաթուղիկոսին։ Եւ Սուրբ Երուսաղեմայ Հայրապետին Տէր Մինասին Եւ տպագրեցաւ ի տպարանի Ըստամպօլցի Խօճայ Կարապետի որդի Տիրացու Աստուածատուրին։ Արդեամբ Եւ ջանիւք նորին։ Ըստամպօլցի Տիրացու Աստուածատուրին։ Եւ կեսարացի Սարգիսին. որ մականուամբ ծառայ կոչի։ Ի Թուականութեանս Հայոց. ռճխը։ Սեպտեմբեր ամսոյ ժա։ Ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս։ Օգնեա՛ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ. զսխալս մեր դու հասոյ յաւարտ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Շնորհօք և ողորմութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և Սրբոյն Մինասայ զօրավարին. յանդ եկեալ աւարտեցաւ սաղս

digitised by A.R.A.R.@

երաժշտական. որ և կոչի ձայնքաղ Շարակնոց: Ի Թվականիս Հայոց ՌՃԽԸ. Օգոստոսի ԺԵ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս: Ի հայրապետութեան Սրբոյ աթոռոյն Էջմիածնի Տեառն Նահապետ Սրբազան Կաթուղիկոսի ամենայն հայոց: Եւ սուրբ Երուսաղեմայ Հայրապետի Տեառն Մինասին: Եւ մայրաքաղաքիս առաջնորդ Տէր Մխիթար Վարդապետին:

Արդ՝ որ հանդիպիք աստուածային երգարանիս յիշեսջիք զիս. բազմամեղս յետին գծողս կարապետ որդի Տիրացու Աստուածատուրս. և զեղբայրն իմ պետրոսն և զհանգուցեալ մայրն իմ մարիամն. և զամենայն արեան առու մերձաւորս. միով հայր մեղայիւ. և դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ ամէն:

Արդ դարձեալ աղաչեմ յիշեցէք Ես նուաստս յամենից զՍարգիս զի կարի յոյժ աշխատեցա ի շարելն և ի սրբագրելն զի ամէնուին ոսկան Վարդապետին շինած քաղուածուի վերա. իւր շինած շարակնոցին վերա շարեցի. յիշեցէք զծնողք իմ զհոգևորն և զմարմնաւորն և զամենայն արեան առու մերձաւորն իմ. և դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ յաւոյն մերմէ ամէն.

Այլ և յիշեսջիք զակր զաղարն զկենդանիս և զննջեցեալս իւր. միով հայր մեղայիւ. զի կարի յոյժ աշխատեցաւ ի սրբագրութեանն սորին. զվարձահատոյցն քրիստոս զիւր վարձն հատուցէ:

Այլ և յիշեսջիք զաշխատաւորս սորին զԹումէրն և զմիքայէլն և զեղիայն. միով հայր մեղայիւ: զի կարի՝ յոյժ աշխատեցան. և դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն: Հայր մեր որ յերկինս:

Կիւլպէնկեան Մատենադարան

264·7

1699

70

ՏՕՄԱՐ: Կ. Պոլիս. 1699. 48 + 288 = 336 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՏՕՄԱՐԱՑ ԳԻՐՔ ՀԱՅՈՑ ՀՌՈՄԱՅԵՑՒՈՑ: ԵՒ ՓԱՐՁԱՏՕՄԱՐ: ընդ որոց և Տաղ Ցովատափու Սարմնախառաց. և Երաշահան և երակ առնելոյ: Ի հայրապետութեան Տեառն Նահապետի սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց: Ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս: Ի Թվականիս Հայոց. ամիս Յուլիսի. Թ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի:

Կիւլպէնկեան Մատենադարան

264·11

1699

71

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՕՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ: Թարգմ. Պետրոս Վարդապետ Թիֆլիսեցի: Կ. Պոլիս, 1700. 208 էջ:

digitised by A.R.A.R.@

## ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԴԻՐՔ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՍՐԲՈՅ ՅՈՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ։ Ի լաթինացւոց թարգմանեցեալ ի հայ բարբառ ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ։ Տպագրեցեալ ներ տպարանում սրբոյ էջմիածնի, եւ սրբոյ Սարգսի զօրաւարի։ Ի Հայրապետութեանն Տեառն Նահապետի Կաթուղիկոսի ամենից. հայոց։ Ի Կոստանդինուպօլիս։ Քաղաքի։ եւ Թուաբերութեանն հայոց։ ռճծ։ եւ ը–ին յունվարի ամսոյն։ եւ ի Թվին փրկչին. 1700. յունվարի ը։

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ես Մելքիսէթ Վարդապետս կարողութեամբն եւ շնորհօքն աստուծոյ Պատրիարգս մայրաքաղաքիս Կոստանդինուպօլսի տեսի զմեկնութիւնս զայս եւ հաւանեցայ. զի գտի զսա ըստ մեկնութեան սրբոց մեծաց վարդապետաց եկեղեցւոյ վասն որոյ ետու զհրաման զի տպագրեսցի։

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ամենազօր շնորհօքն աստուծոյ յանկ ելեալ աւարտեցաւ գիրքս մեկնութեան տեսլեանն յոհաննու. ըստ մեկնութեան սրբոց վարդապետաց աստուածաբանից եկեղեցւոյ. զոր եւ թարգմանեցեալ եղեւ սա ի Լաթին լեզուէ ի հայ բարբառ. ի Պետրոսէ Վարդապետէ Թիֆլիզեցւոյ ի խնդրոյ ումեմն ազնիւ բանասիրի. առ ի լուծումն տարակուսութեան սրտի իւրոյ եւ մանկանց սրբոյ եկեղեցւոյ եղբարց իւրոց սիրելեաց։

Եւ քանզի թէպէտ գտանիւր սա ի մէջ ազգիս մերոյ. սակայն էր յոյժ սակաւ եւ դժուարագիւտ. եւ այն եւս դժուարիմաց եւ յաճախաբան. զոր ամենայն ոք ոչ կարէր պարզապէս իմանալ. վասն որոյ եւ սա դիւրիմաց ոճով եւ կարճառօտ կերպիւ շարադրեցեալ եղեւ զի մի ոք փափաքող սորին անարդիւն լիցի ի մեկնութենէ սորին։

Գիտեմ զի գոն բազումք եւս որք հմուտք են եւ կամ տեսեալ են զմեկնութիւն գրքոյս այսմիկ այլ յաճախագոյն քան զայս. սակայն խնդրեմք զի մի անգոսնեսցեն զկարճագոյնս. նկատելով միայն ի յաճախութիւն տեսեցելոյն եւ հմտացելոյն. վասն զի բազմութիւն բանիցն ոչ տարաբառնայ զտարակուսութիւն սրտի. այլ բանն. եւ զօրութիւն մտացն. որոյ ըմբերցողն մտադրութեամբ եւ թարգ նախանձու, վերալնանի բազմաւ բանիւ եւ զօվանայ մտօք, եւ ապահով լինի սիրտն ի յամենից տարակուսութեանցն որ ի վերայ գրքոյս այսմ ունի։

Մանաւանդ այնոքիկ որք փոքր բանիւ կարող են եւ յօժար իմանալ զբազումս որոյ յաղագս շարադրեցեալ եւ տպագրեցեալ եղեւ սա. լիով բանիւ եւ զօրութեամբ եւ կարճագոյն բանիւ։

Կամակցութեամբ եւ հաւանութեամբ մեծաւորաց ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս, ի տպարանի սրբոյ էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարին։

Որ եւ աւարտ սորին եղեւ ի Թուին Փրկչին. 1701։ Իսկ ըստ հայոց. ռճծ ի մայիսի իը–ն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զի որք հանդիպիք այսմ աստուածայնոյ մատենիս յիշեսջիք առ տէր միով հայր մեղայիւ եւ ողջունիւ զայնոսիկ որք աշխատեցան եւ կամ օգնութիւն հասին արդեամբ եւ կամ առիթք եղեն ջանիւք. ի թարգմանիչն եւ ի տպիչն սորին եւ որք յիշէք յիշեալ լիջիք ի միուս անգամ գալստեան տեառն մերոյ։

Ամէն Հայր մեր որ յերկինս ես...

Կիւլպէնկեան Մատենադարան

238

Գն 1700

## 72

ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ։ Կ. Պոլիս, 1700 (աւարտ. 1701), 258 էջ։

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ։ Շարադրեցեալ ի Խաչատրոյ Էրզրումեցւոյ Աստուածաբան վարդապետէ՝ բստ մեկնութեան գերազանցից վարդապետաց աստուածաբանից եկեղեցւոյ։

Որոց անուանքն են այսոքիկ. սուրբն Օգոստինոս՝ սուրբն Գրիգոր Նիւսացին՝ սուրբն Գրիգոր հռոմայ հայրապետն. սուրբն Ամբրոսիոս՝ սուրբն Բեռնարտոս՝ Որոգինէս՝ սուրբն Թովմաս աքուինացին՝ սուրբն Բարսեղ՝ սուրբն Հերոնիմոս Բէթայ քահանայն՝ Թուպերտոս՝ սուրբն Անսէլմոս, Կասիոդորոս՝ սուրբն Եպիփան, սուրբն Կիւրեղ, Իզիտորոս՝ սուրբն Կիպրիանոս՝ սուրբն Ֆրանչիսկոս՝ սուրբն Բոնավէնտուրա։ Եւ մանաւանդ տիրինաս ի փառս մեծագոյնս աստուծոյ։

Ի Հայրապետութեանն Տեառն Նահապետի Կաթուղիկոսի ամենայն. հայոց. Ի Կոստանդինուպօլիս։ Քաղաքի։ եւ Թուականութեան հայոց։ ռճծ։ յունվարի ամսոյն ը։ եւ Ի Թվին փրկչին. 1700. յունվարի ը։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ես Մելքիսէդ վարդապետս կարգութեամբն. եւ շնորհօք աստուծոյ Պատրիարգս մայրաքաղաքիս Կոստանդինուպօլսի, տեսի զմեկնութիւնս զայս երգոյ երգոց սողոմոնի, շարադրեցեալ ի հաւատարիմ բարեկամէն մերմէ Խաչատուր վարդապետէ էրզրումեցւոյ, եւ ընթերցեալ հաւանեցայ. զի զտի զնա բստ մեկնութեան սրբոց մեծաց վարդապետաց եկեղեցւոյ. վասն որոյ ետու հրաման, զի տպագրեսցի.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ամենազօր կարողութեամբ հօրն երկնաւորի եւ շնորհօքն յիսուսի. եւ նպաստութեամբն ոգւոյն սրբոյ յանկեալ աւարտեցաւ գիրքս մեկնութեան երգոյ երգոցն սողոմոնի. շարադրեցեալ ի խաչատրոյ էրզրումեցւոյ աստուածաբան վարդապետէ. բստ մեկնութեան զանազանից Վարդապետաց եկեղեցւոյ ի խնդրոյ ումեմն ազիկար բանաւորի, վասն լուծանելոյ զտարակուսութիւն սրտի իւրոյ. եւ ամենից մանկանց եկեղեցւոյ լինել սաիթ անտարակոյս մնալոյ ի բանս եւ ի մեկնութիւնս այսմ աստուածայնոյ մատենիս։ Որ եւ թէպէտ գտանիւր ի մէջ ազգիս մերոյ, մեկնութիւն գրքոյս այսորիկ սակայն ոչ ամենուրեք, այլ ի տեղիս. տեղիս եւ այն եւս համառօտ եւ Նորագցյաց որոյ վասն տպեցեալ եղեւ սա զի յամենուրեք գտանիցի, եւ մի ոք փափաքող սորին ի տարակուսութեան մնասցէ. այլ ամենեքեան վայելեսցեն զիմացումն եւ զզօրութիւն երկնաւորան եւ սիրալիր գրքոյս այսմիկ։ Կամակցութեամբ և հաւանութեամբ մեծաւորաց. և սրբագրութեամբ ումեմն չնչին բանաւորի։

Թուին քրիստոսի 1701. եւ բստ հայոց ռճծ–ին ի մարտի ի–ին։ Բայց երես անկեալ աղաչեմ զամենեսին զի սիրով ընդունիցիք զսա եւ մեզ յիշման առ տէր. ըմբռն համարեսջիք զմատակարարսն եւ զաշխատողս եւ զնպաստ հասողսն ի շարադրումն եւ ի տպումն սորին եւ որք յիշէք յիշեալ լիջիք ի քրիստոսէ։ Խանդակաթ սիրով ընթերցողք երբ խանդակաթ լինիք առմաւ առ տէրն յիսուսի. հասէք ի նպաստ եւ օգնութիւն նպաստելոյն սորին։ Սիրով հայր մեղայիւ եւ ողջունիւ Ամէն։

Հայր մեր որ յերկինս…
Ողջոյն քեզ Մարիամ…

Կիւլպէնկեան Մատենադարան

223·9

խա 1700

73

ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ։ Կ. Պոլիս, տպ. Սարգիս Դպրի, 1701 (աւարտ. 1702), 392 էջ։

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ Կարգաւորութիւն և հրահանգ տէրունական տօնից: Զոր կարգեալ և սահմանեալ ի սահակայ հայրապետէ ըստ արարողութեանցն հայաստանեայց: Ի հայրապետութեան տեառն Նահապետի ամենայն հայոց Կաթուղիկոսի սրբոյ էջմիածնի: Զոր առ ի մէնջ յոյժ խնդրող գտաւ ըստ այսմ տանացուցիս. զոր աւետարանքն և մարգարէականքն և պօղոսի գիրքն և այլն գլխովն և համարովն գրեցաւ որպէս աստուածաշունչի միջումն եղեալ են. որ յորժամ կամենաս յաւուր պատշաճին. թէ գիրք թէ աւետարանն ո-րում գլխի է կամ քանի համարումն է դիւրաւ գտանի ի մէջ աստուածաշունչին: Դարձեալ յուսանցի ըրախամն թիւթի համարքն է լաւ օրինակէ. և զապագրողս յիշեա: Ի թվին հայոց ռճծ. Ի կոստանդինուպօլիս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

Փառք պատիւ և գոհութիւն հանդերձ երկրպագութեամբ. Հօր և Որդւոյ և Հոգ-ւոյն սրբոյ ամէն:

Որ ետ կարողութիւն նուաստացելոյ անձինս. հասուցանել ի կատար զեկեղեցեայար-մար և զնարակերպ զգիրքս զայս որ կոչի տօնացոյց կատարեալ: Ի հայրապետութեան տեառն Նահապետի ամենայն հայոց կաթուղիկոսի և առաջնորդութեան սրբոյ Երուսաղէմի տեառն Մինասայ. Եւ պատրիարգութեան մայրաքաղաքիս կոստանդնուպօլսոյ Աւետիք վար-դապետի. ի թվականիս հայոց. ռճծ. յամսեան մայիսի Արդ՝ հանդիպողք յայսմ գրկանս վայելչապէս. յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ Սարգիս որ եմ ծառայ ամենե-ցուն. քանզի բազմաւ ջանիւ աշխատեցայ ի տուէ և ի գիշերի թէ ի ժողովումն սորա ի մի տուփ. թէ ի տպելն յոյժ աշխատեցայ. ունելով յոյս ի մօր զաւրք կոյսն Տիրուհի. որոյ այցելու-թիւն անպակաս եղիցի. ստացողաց և աշխատողաց սորին ամէն: Հայր մեր:

էջ 384

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ

Պարզասամարս խիստ օրինած.
Եւթն երակովն զաւ գտան բաց.
Որ խիստ խորին է զա մէկնած.
զիս մեղաւոր սարգսիս ողորմի տաք:

էջ 388

Կիւլպէնկեան Մատենադարան

264·1

1701

74

ԹՈՎՄԱՍ Ա ՔԵՄՓԻՍ. ՀԱՄԱՀԵՏԵՒՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ: Թրգմ. Յովհաննէս Վրդ. Կոստանդ-նուպոլսեցի(Հոլով): Կ. Պոլիս, 1701. 352 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ԹՈՄԱՅԻ ԳԵՄՓԵՑԻՈՅ: Կանոնաւոնակի կրօնաւորի ի կարգէ Սրբոյն Օգոստինոսի: Յաղագս Համահետեւմանն քրիստոսի: Թարգմանեցեալ ի Յոհաննէսէ Վարդապետէ Կոստան-

digitised by A.R.A.R.@

*գենտպօլսեցւոյ, ի Հոգեկան Զաւարճութիւն մերազնեայց։ Եւ տպագրեցաւ, ի Կոստանդինուպօլիս. Արդեամբք եւ ջանիւք սմանց փափաքողաց գրքոյս այսորիկ. Արդ որք հանդիպիք սմա ընթեռնլով կամ գրանլով. յիշեսջիք առ ալ զմատակարարսն սորին։ Եւ որք յիշէք. յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ամէն ի Հայրապետութեանն Տեառն Նահապետի Կաթուղիկոսի ամենից հայոց։*

*Ի Թուաբերութեան հայոց ռճխ. եւ Թ ին հոկտեմբերի ամսոյն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Աւարտեցաւ գիրքս համաձայնութեամբ. ի Թուականութեան հայոց։ ռճծ.ին ի յուլիսի ը։ Ի փառս մեծագոյն աստուծոյ եւ ի օգուտ ջերմեռանդութեամբ ընթերցողաց։ Արդ որք զմայլիք սովաւ առ սէրն յիսուսի յիշեսջիք առ ալ զմատակարարսն սորին. եւ որք յիշէք զվարձս ի տեառնէ առնուցուք. Ամէն։*

ԾԱՆՈԹ. Անուանաթերթին վրայ տպագրութեան թուականն դրուած է Հայոց ՌՃԽ (1140 + 551 = 1691). յիշատակարանին մէջ՝ Հայոց ՌՃԾ (1150 + 551 = 1701)։ Մենք ընդունեցինք այս վերջինը, հակառակ որ Ք. Կորկոտեան («Հայ Տպագիր Գիրքը Կոստանդնուպոլսում», Երեւան, 1964, էջ 109) անոր տպագրութեան համար կը դնէ 1700–1701 թուականները։ «Հայ Հնատիպ Գրքի Մատենագիտական Ցուցակ»ը զայն կը դնէ 1700–ի տակ։ Առաջինը զայն կը նկատէ Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի անունով Կ. Պոլսոյ տպարանին մէջ տպուած, մինչ երկրորդը որպէս Մխիթար Սեբաստացիի հրատարակութիւն կ'ընդունի։

*Կիւլպէնկեան Մատենադարան*

230·2 Գւ

1691

## 75

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ. ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ (ՆԱՐԵԿ)։ Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր դպրի, 1701 (աւարտ. 1702), գճլզ (436) + բճծզ (256) + ճիւ — ճծր (8) = 700 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

*ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ ԱՐԱՐԵԱԼ։ Տպագրեցաւ ներ գործարանաւ Սրբոյն Մինասայ զօրավարի։ Ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի Տեառն Նահապետի սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց։ եւ ի Հայրապետութեան սրբոյ Երուսաղէմի. Տեառն Մինասայ յամթեցւոյ։ Եւ առաջնորդ մայրաքաղաքիս մելքիսեդ վարդապետին։ Ի տպարանի. Պարոն Կարապետի որդւոյ Աստուածատուր դպրի։ Արդեամբ եւ հոգաբարձութեամբ եւ ծախիւք տիգակեցի մինասի որդւոյ Ղազար իբիցւոյ։*

*Ի թվականութեան փրկչին. ռչա եւ ի թվիս հայոց ռճծ. Մարտի ամսոյ. ի։ ի Կոստանդնու Պօլիս։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան

*Փա՜ռք պատիւ եւ երկրպագութիւնք մշտնջենականք. այնմ գերագունոյ արքային, որոյ զօրութիւն է անազթելի. իմաստութիւն անբաւելի. եւ սէրն անքննելի։ Նմա օրհնութիւն միշտ գովութիւն անդադար, փառաբանութիւն անլռելի։ Եւ շնորհակալութիւն հանդերձ երկրպագութեամբ միշտ եւ անզրաւ յաւիտենին ամէն։ Որ բարեխօսութեամբ եւ աղօ-*

digitised by A.R.A.R.@

*թուք մինչ կուսին մարմնոյ այցելուհոյն մերոյ, եւ մաղթանօքն և միջնորդութեամբ սրբոյն Մինասայ և այլ սրբոց՝ ետ կարողութիւն նուաստացելոյս պաշտելոյս ի բազմավիշտ եւ ի յոգնավտանգ ժամանակիս յաւարտ հասուցանել զաստուածային և զհոգեհրաշ գիրքս աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, որ ունի առ ինքն ամբարեալ զանազան եւ պէսպէս աղերս մաղթանաց կանխեալ առ Աստուած, որով ամենայն ոք գիւտս հոգւոյ իւրոյ յուսալով վերընդունել ի նմանէ որ տայ աննախանձ հայցողաց:*

*Ի հայրապետութեան տեառն Նահապետի Սրբազան Կաթուղիկոսին Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Եւ Առաջնորդութեան սրբոյ Երուսաղէմի տեառն Մինասի:*

*Եւ առաջնորդ մայրաքաղաքիս տէր Աւետիք վարդապետ:*

*Արդ՝ ես Տէր Մինաս արհի եպիսկոպոս, եւ պատրիարք սրբոյ Երուսաղէմի որ ի վիճակին Հայոց՝ ի կանուխ ժամանակաց ունելով փափաք ընդ աստուածային գրգոյս այսմիկ՝ մինչ եւ ամենայն ուրեք մխիթարէի սովաւ: Իսկ ի չուելն իմ ի սուրբ Երուսաղէմ ի Թուին ռճխ. գտի անդ ես գրեան աղօթից սրբոյ Նարեկացւոյն այլեւս գլուխս ե. որպէս տեսանի ի վերջն գրգոյս այսմիկ: Եւ զկնի ամաց ի գնալն իմ ի սուրբ աթոռն Էջմիածին՝ ի նորին գըրգատանէ. Սաղմոսավանից. ի խորվիրապէ. եւ ի սեւանու անապատէ ետու բերել զհինգ գիրք Նարեկի եւ սկսայ սրբագրել զսա բազում զգուշութեամբ՝ այսինքն զաղլեցեալսն ի գրչաց ուղղագրեցի ի հնգից օրինակէ: Այլեւ եւ վերոյ յիշեցեալ զհինգ գլուխ բանս նոյնոյ Երանելւոյն, ընդ գրգոյս ի մի տուփ շարայարեցի զի մի արտաքոյ մնալով կորուսանիցի աշխատ Երանելւոյն: Եւ ի գտանելն իմ յԷջմիածնէ ի Կոստանդինուպօլիս յաջողեցութեամբ վերնոյն ի գործ շարժեալ կամէին տպագրել զսա արք բարեպաշտօնք. վասն որոյ ի խնդրոյ նոցին շնորհեցաք զօրինակս մեր որպէսզի եղիցի օգուտ վերծանողաց եւ պայծառութիւն մերազնեայց:*

*Արդ՝ յուսամնեալ մանկունք նոր սիոնի, եւ ապաստուորք բանի՝ ընթերցողք՝ նաեւ զօգորմութիւն հայցօղք ի տեառնէ սոյն սուրբ գրքիս՝ յիշեցէք առ տէր փութատութիւնս մեր եւ զուք յիշեալ լիջիք, եւ ընկալջիք զվարձս ի քրիստոսէ յիսուսոյն մերմէ Ամէն: Արդ՝ երես անկեալ աղաչեմ զաւսրոդ իմ որք հանդիպիք սոյն սուրբ գրքիս յիշեցէք միով հայր մերիւ բարամզօլցի Փարոն կարապետ որդի Աստուածատուրս, եւս եւ հանգուցեալ մայրն իմ մարիամն եւ զեղբայր իմ պետրոսն. զի կարի յոյժ աշխատեցայ ի շարելն սրբոյ մատենիս տքնելով ի տուէ եւ ի գիշերի. եւս վաստկելով զդրամս յոլով ի յամենայն գործառութիւնս սորին եւ զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ յիսուսոյն մերոյ ամէն:*

*Զկնի երես անկեալ աղաչեմ զաւսրոդ իմ յիշել առ Տէր ողորմելի անձն ապաստւոր գործարանիս, տուգաղեցի Մինասի որդի Տէր ղազարս, եւ ծնողքս իմ զմինասն՝ եւ զավհարն եւ զայլ արեան առու մերձաւորսն ոյք յիշէք յիշեալ լիջիք ամէն:*

*Այլ եւ յիշեսջիք առ տէր Աղուլեցի Մուրատի որդի պարոն սրուէթին, եւ զեղբայր իւր զտէրացու զալուստն զի բազում օգնութիւն արարին առաջարկութեան տպոյս:*

*Այլ եւ յիշեսջիք զաշխատօղս սորին զթուխէրն, եւ զեղիեան զխոջատուրն շահնազարն յաղօթս ձեր: Հայրկ յետոյ եւ վասն սրբագրողիս գրգոյս զտէրացու մազաքիաս յիշել մաղթեմ. որոց տէր յիսուս, պատճառ աշխատողի եւ տուացողի սորին եղիցի մինչ ձեռնտու եւ օգնական Ամէն:*

*Եւ եղեւ յաւարտ Տպագրութեան սրբոյ մատենիս ի թուոջ փրկչին ոյր, եւ հայոց ռճծա ամսեան Մայիսի է ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս:*

ԾԱՆՕԹ. 439-րդ էջէն սկսեալ կը պարունակէ Նարեկացիի ճառերն ու մեկնութիւնները, ինչպէս նաեւ Առաքել «ճռամեն եւ քաջ հռետորի «Գովութիւն ի վերայ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» քերթուածը:

*Կիւլպէնկեան Մատենադարան*

248

Նա 1701

76

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ: 1702. 342 էջ:

## ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ԱՆՈՒՆ, ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ ԲԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ. տանս հայոց վասն մանկանցն որ օրհնեն զկնաւս մինչ յանուն նորայ ցնծութեամբ:

Յամի Տեառն 1702: Յունվար 8: Ի փառս մեծազօրին Աստուծոյ:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի:

ՆՇՈՒՄ. Տպագրութեան վայրը եւ հրատարակիչը չեն յիշուած: Դատելով գործածուած գիրերու տեսակէն, զարդերէն եւ քլիշէներէն, պէտք է զայն համարել Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի տպարանի հրատարակութիւն: Իսկ այդ տպարանին անունով հրատարակութիւն այդ թուականներուն կատարուած է միայն Լիվոռնոյի մէջ:

Կիւլպէնկեան Մատենադարան

811·21

Ծն. 1702

### 77

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ. 1702, 335 էջ:

## ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ՀԱՑԵԼԻ ՎԱՐՈՒՑ. ՈՐ ԱՍԻ ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ: Տպագրեցեալ ի Հայրապետութեան Տեառն Նահապետի հայոց կաթուղիկոսի:

Ի թվին փրկչական 1702: Իսկ ըստ հայոց ՌՃԾԱ: մայիսի ամսոյ ի ժէն: Ի փառս մեծազօրին Աստուծոյ:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի:

ՆՇՈՒՄ. Տպագրութեան վայրը եւ հրատարակիչը չեն յիշուած: Հաւանաբար Լիվոռնոյի տպագրութիւն. թուղթը, զարդերը, եւ քլիշէները համանման նախորդ՝ թիւ 76 գրքին:

Կիւլպէնկեան Մատենադարան

922

Վա.

### 78

ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐ. ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ: Ամստերդամ, հրտ. Թովմաս Եպս. Վանանդեցի, 1702, 620 էջ:

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԽՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ։ ԿԱՄ։ ՏԱՐԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ։ Որ է բան։ Յաղագս Տարերաց՝ և Տարերական որակութեանց, Խառնուածոց՝ և Վերամբարձ գրոանցն. ուստի՝ գոյանայ ամպն՝ մառայլն՝ ցօղն՝ եղեամն՝ անձրեւն՝ ձիւնն, կարկուտն՝ փայլատակն՝ կայծակն, գետնաշարժն՝ հողմն՝ աղեղն, և այլ այսպիսի Վերամբարձ գրոանք։ Յօրինեալ ի Մատթէոսէ և ի Ղուկասէ յաշխրատ Վանանդեան Դպրաց։ Ի պէտս մերազնեայ Բանասէր Եղբարց։ Տպեալ՝ և ծախիւք Թովմայ Նամէն Բարունեայ, և Սրբափայլ Եպիսկոպոսի Վանանդեցւոյ։ Ի Հայրապետութեան Լուսաճեմոյս Աթոռոյն՝ Սրբոյ էջմիածնի, Տեառն Նահապետի։ Յամի Տեառն. 1702։ ՅԱմստէրդամ։

ՑՈՒՑԱԿԱՐԱՆ Ա

Առ Բանասէր Թարգմանչաց Ընթերցողս։

... Արդ՝ որոց երեւեսցին այսոքիկ պիտանիք՝ և հաճոյք. արասցեն յիշման արժանի զԱռաքելաշաւիղ Հայրն մեր՝ զԹովմաս Նամէն Բարունին, զՏարմարող՝ և զկարգող Դարձարանիս. հանգերձ երկոքումբք որեան աշու գործակալօքն՝ Մատթէոսիւ, և Ղուկասու։

Իսկ՝ որոց ունկալոց, և անօգուտ թուիցի, անպարսաւ թողուլ զմեզ մաղթեմ. զի և Բարերարն Անոխակալ. թողցէ զամենայն յանցանս, զծանունս՝ և զփոքունս մաղթանօք սրբոյ Եկեղեցւոյ իւրոյ. ամէն։

էջ 3

ՑՈՒՑԱԿԱՐԱՆ Բ

Գոհացողական։

Այսուհետեւ՝ գնելով զաւարտ այսր գործակի. եղիցի ամենաբարութեան, ամենակալութեան, ամէնիմաստութեան, ամենազօրութեան, անբովանդակութեան, անշուշտ ճշմարտութեան, անեզր երանութեան, մշտնջենաւորութեան, և ինքնակամութեանն Աստուծոյ (Աւետ) գոհութիւն ի Շնչաւորաց. օրհնութիւն ի յԲղջայրականաց, և պատիւ ի Բանականաց. փառաբանութիւն ի բարձունս երկնի, իշխանութիւն ի ստորեւս երկրի, և շնորհակալութիւն ի բնակիչս երկրաբնակչիւրոյն յերկիր, և յանվախճան ուխտենս ուխտենից ամէն, ամէն եւս։

Ջանիւ հասցես առէ յօրհնաց.
Մի՛ ծոյլ կենար, և զեղերան։
Մի՛ ոխրեր քուն զանգադանաց.
Մի՛ արթնութիւն թըրադանաց.

էջ 120

Կիւլպէնկեան Մատենադարան

374

Մա–Ղու.

79

ՇԱՐԱԿՆՈՑ։ Ամստերդամ, հրտ. Թովմաս Եպս. Վանանդեցի, 1702 (աւարտ. 1703), 780 էջ։

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՇԱՐԱԿՆՈՑ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՔ Աստուածայնոց եւ երջանկաց սրբոց վարդապետաց. Հայոց Թարգմանչաց: Զկարգաւորութիւնս Եկեղեցւոյ վայելչացուցանողաց: Տպեցեալ յԱմստէլոտամում քաղաքի: Յամի Տեառն. 1702:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

... Այլեւ՝ յիշեցէք յարտասուալի յաղօթս ձեր զՏպարանս անբերելի դառնակրութեամբ կազմօղն, եւ զՏպարանս յոգնազան երկամբք յայտյանդիման ի ծայրածօղն, զեռամեծ Րաբունին, եւ զՍրբափայլ Հայրն մեր՝ զԹովմաս հեզահոգի Եպիսկոպոսն որոյ Յաջին յԱմենափրկչոյ ձորոյն Վանանդու Գողթնեաց Գաւառին. զծնօղսն իւր՝ զՆուրիջան, եւ զԴիլզար. զեղբարսն՝ զՏիրկոր զԱբրիստակէս, եւ զՅակոբ. զքոյրն, Զաքայ, զհանգուցեալսն ի Քրիստոս. եւ զայլ ամենայն արեանառու ազգայինսն. քանզի միայն նոյն Վեհանձին Հաւանութեամբն, Տպիւքն, եւ Ծախիւքն յերրորդում հուսպիս ի լոյս ածաւ այս Աստուածայունչ երգարանս, եւ յանկելեալ աւարտեցաւ յԱմի Տեառն. 1703. Յուլիսի. 15:

Ի վախճանի յիշեցէք ի սուրբ արտէ զհարազատ աշխատաւորս, զանձանձիր պաշտօնեայս, զքաջեմիտ ապաւորս, զմաքրիմ մատակարարս, եւ զարեանառու գործակալս նախադէկ Վեհանձնութեան Տպարանիս. զՄատթէոսն, զՄինասն, եւ զատոտն կոխեալ Ղուկաս: Տրիտուր սորոյ ձերոյ իցէ. զի յայսր հօսանուտ կենցաղոյս վերջին աւուրն չնորհօք լիջիք երջանկակիրսնք, եւ յերկրին կենդանեաց առաջին աւուրն՝ փառօք Աստուածահանգիք, իրր գրեալք ի գիրս Դպրութեան անանց կենացն. Ամէն:

Մերժեա՛ ի քէն զիգծ մարմնական.
որ ոչ ունի զարմատ յինքեան:

Կիւլպէնկեան Մատենադարան

264.7

1702

80

ՑԱՆՈՐ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ. ԿՏԱԿԳԻՐՔ: Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կ. Պոլսեցի, 1703. ՃԺԲ (212) էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐԳՈՒԿՍ ԱՅՍ ՊԱՏՄԷ Նախ վասն զալստեանն Յիսուսի երուսաղէմ Երկրորդ վասն չարչարանացն որ կրեաց առաջի պիղատոսի դատաւորի, եւ քահանայապետացն աննայի եւ կայիափայ: Աստցեալ երանելոյն յակոբայ Տեառն եղբօր: Տպագրեցաւ ի փառս ամենամեծին Աստուծոյ. օգուտ վերծանողաց ի Հայրապետութեան Տեառն Նահապետի որրագան կաթուղիկոսի ամենայն հայոց. որրոյ աթոռոյն էջմիածնի եւ սրբոյ Երուսաղէմի եւ կոստանդինուպոլսոյ առաջնորդի Տէր Աւետիք վարդապետի: Հողաբարձութեամբ Աստուածատուրի պալալեացւոյ. Թուոջ փրկչին ռչզ: եւ ի Հայոց ՌՃԾԲ. ի մայրաքաղաքն կոստանդինուպոլիս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան:

Փա՛ռք պատիւ եւ երկրպագութիւնք մշտնջենականք: Այնմ զերազանցոյ որքային,

digitised by A.R.A.R.@

որոյ զօրութիւնն է անպարտելի. իմաստութիւն ամբաւելի. եւ սէրն անքննելի։ Նմա՛ օրհնութիւն միշտ գովութիւն անդադար, փառաբանութիւն անլռելի։ Եւ շնորհակալութիւն հանդերձ երկրպագութեամբ միշտ եւ անդրաւ յաւիտենիւ ամէն։ Որ բարեխօսութեամբ եւ աղօթիւք միշտ կուսին մարիամու այցելուհոյն մերոյ, եւ մաղթանօք եւ միջնորդութեամբ սրբուոյն։ Մինասայ եւ այլ սրբոց՝ ետ կարողութիւն նուաստացելոյ պաշտօնէիցս ի բազմավիշտ եւ ի յոգնավտանգ ժամանակիս յաւարտ հասուցանել զաստուածային եւ զհոգենորոգ գիրքս որ կոչի կտակ չարչարանացն Քրիստոսի ասացեալ սրբոյն Յակոբայ Տեառն եղբօրն։ Եւ ընդ նմին հետեւակ ճառ սրբոյն Եփրեմի ասացեալ յաղագս ապաշխարութեան եւ որ ըղութք ի սմանէ կարդալով կամ օրինակելով յիշեսջիք միով հայր մերիւ զմատակարարողն սորին եւ դուք իշխեալ լիջիք ի Քրիստոսէ ամէն։ Ի տպարանի Աստվածատուր Դպրի։

Կիւլպէնկեան Մատենադարան

252

Ցա 1703

## 81

ՅՈԴՆԱԴԻՄԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆՔ։ Ամստերդամ, տպ. Թովմա Եպս. Վանանդեցի, 1704. 6 չհ. + 58 = 64 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՅՈԴՆԱԴԻՄԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆՔ։ Երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր՝ ըստ կարգի Այբուբենիցն, հաւաքեցեալք։ Ի լոյս ածեալ Տպիւք, եւ Արդեամբք Առաքելաշաւիղ Թովմայ Եռամեծ Վարդապետի Վանանդեցւոյ։

Որ հրահանգից վարժարանի.
չէ տակաւին ներկուռ բանի։
Կամ ի հանդէս Փիլոսոփի,
զանձն իմաստիւք կրթեալ չունի։
Զայս սահմանաց թէ միտ ունի.
մեծի ուսման ժառանգ լինի։
Յամի Տեառն. 1704։ ՅԱմստէլդամ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Զունի։

ԾԱՆՕԹ. Առաջին էջի ճակատին (որ կը ներկայացնէ Արիութիւնը, Արդարութիւնը եւ Խոհեմութիւնը) պսակին մէջ՝ կը գտնուի հետեւեալ յիշատակութիւնը.

Ով Նուրբէջանեան
Լե՛ր միշտ Խոհեմ
Արդարարան.
Առցես պըսակ
Արիութեան։

Այս գիրքը ապահովաբար հեղինակութիւնն է Մատթէոս կամ Ղուկաս Վանանդեցիներու, որովհետեւ էջ 45-ի վրայ կը յայտնէ. «Արիստոտէլի յաղագս Առաքինութեանց, եւ Չարութեանց. ըստ կարի ի բուն Յոյն օրինակէ գաղափարեալ՝ եւ կարգադրեցեալ յումեմնէ ապիկար դպրէ Վանանդեցւոյ»։

Կիւլպէնկեան Մատենադարան

371.93

Ցո 1704

Կազմեց՝ Ա. Գ.

(Շար. 6)

digitised by A.R.A.R.@